"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ
ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

"Four A Consulting" CJSC
CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Նոր սերունդ» մարդասիրական Հասարակական Կազմակերպության կառավարման մարմիններին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Նոր սերունդ» Հասարակական Կազմակերպության 2022թ. գործունեության հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը՝ այսուհետև Հաշվետվություն:

Մեր կարծիքով, «Նոր սերունդ» Հասարակական Կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը՝ հանրային միջոցներից ֆինանսավորման մասով բոլոր էական առումներով տալիս է դրամական միջոցների մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը 2022թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար "Հասարակական Կազմակերպությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Կարծիքի հիմքը

Աուդիտն անցկացվել է Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար" բաժնում: Աուդիտորն անկախ է Հասարակական Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պարտավոր է պահպանել ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում աուդիտին վերաբերող էթիկայի այլ պահանջները: Աուդիտի ընթացքում ձեռք է բերվել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ կարծիք արտահայտելու համար:

Հաշվետվության համար Կազմակերպության Ղեկավարության **և կառավարման լիազոր անձանց** պատասխանատվությունը

Կազմակերպության ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Կազմակերպության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները, դրամական միջոցների մուտքի և ելքի օրինականությունը, և օգտագործման գործընթացները:

Կազմակերպության Ղեկավարությունը պատասխանատու է նշված հաշվետվությունը կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է սխալի կամ խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվություն կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանումը, կիրառումը և պահպանումը:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Կազմակերպության Հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ ՝ էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

5 մայիսի 2023թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/ Աուդիտի ղեկավար

«ՀՈՐ ԷՅ ՔԱՍԼԹԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693